**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

<<25>> սեպտեմբերի 2025 թ. քաղաք Մարալիկ

2025 թվականի սեպտեմբերի 25-ին, ժամը 15:30-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի ավագանու նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու հերթական նիստը:

Նիստը վարում էր՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար, ավագանու անդամ՝ Արման Սարիբեկյանը:

Նիստն արձանագրում էր՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հարություն Համբարյանը:

Զեկուցողը նշեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասի>> Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի համաձայն ավագանու հերթական երկրորդ նստաշրջանները գումարվում սեպտեմբերի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև դեկտեմբերի վերջին չորեքշաբթին: Այսինքն ավագանու հերթական երկրորդ նստաշրջանները արդեն մեկնարկել է և այսօր տեղի է ունենալու ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստը:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի համաձայն, ավագանու հերթական նիստից մեկ շաբաթ առաջ հրապարակվել է ավագանու այսօրվա նիստի օրակարգը, նշվել է նիստի անցկացման վայրը և ժամանակը: Այդ տեղեկությունները փակցվել են համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում, տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով, տեղադրվել են մարզպետարանի, համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքերում և հրապարակային ծանուցումների www.Azdarar.am կայքում:

Նիստի օրակարգում ընդգրկված որոշումների նախագծերը մեկ շաբաթ առաջ տրամադրվել են ավագանու անդամներին և տեղադրվել համայնքի պաշտոնական կայքում:

Ավագանու նիստին ներկա անդամների հաշվառման արդյունքում արձանագրվեց, որ Անի համայնքի ավագանու 21 անդամներից, համայնքի ավագանու հերթական նիստին մասնակցում են <<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության ավագանու 9 անդամները՝

**Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ**

**Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ**

**Ռ. ԱՐՇԱԿՅԱՆԸ**

**Է. ՌՒՌՈՒՏՅԱՆԸ**

**Ա. ՇԱԲՈՅԱՆԸ**

**Հ. ՋԱՏԻԿՅԱՆԸ**

**Ժ. ԱԼԵՔՅԱՆԸ**

**Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆԸ**

**Մ. ԵՆՈՔՅԱՆԸ:**

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ավագանու անդամներ՝

**ԳԱԳԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԸ**

**ԳԱԳԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԸ:**

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու անդամ՝

**ՄՈՒՐԱԴ ԱՍԼԱՆՅԱՆԸ:**

Հարգելի պատճառով ավագանու նիստից բացակայում են <<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության ավագանու անդամ Գոռ Աղաբեկյանը և Նաիրա Սարոյանը:

Անհարգելի կարգով բացակայում են՝

**Վ. ԿՆՅԱԶՅԱՆԸ**

**Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ**

**Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**

**Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ**

**Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ:**

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու անդամ՝

**Ն. ԱՍԱՏՐՅԱՆԸ**

<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու անդամ՝

**Ա. ԲՈԶԻԿՅԱՆԸ**

Դրանով հանդերձ, համայնքի ավագանու նիստի քվորումը ապահովված է /ավագանու ներկա անդամներ՝ 12, բացակա՝ 9/ համայնքի ավագանու հերթական նիստը հայտարարվեց բացված:

Համայնքի ավագանու նիստին ներկա են համայնքի ղեկավարի տեղակալները, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ, համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրեններ:

Ներկայացվեց համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգի նախագիծը՝

**ՕՐԱԿԱՐԳ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 161-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երտասարդության հարցերի բաժնի պետ Գոհար Ծերունյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի պարտականությունները կատարող Անժելա Սաղաթելյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ 96,7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ «ԱՐԵԳ ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երտասարդության հարցերի բաժնի պետ Գոհար Ծերունյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 168-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երտասարդության հարցերի բաժնի պետ Գոհար Ծերունյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 98-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լուսինե Գրիգորյան/

8) «ԷՍ ԿԱ ԷՍ ՍԹՈՈՒՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԴԵԶԻՏԱՅԻՆ ՊՈՐՖԻՐԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ 1-ԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, ՇԵՆՔ 21, ԹԻՎ 9 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՍՈՒՍԱՆՆԱ ՄԿՐՏԻՉԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ Հ.ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ, 22 ՇԵՆՔԻ ԹԻՎ 21 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ԹԱՄԱՐԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ, 17 ՇԵՆՔԻ ԹԻՎ 4 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՊԵՏՐՈՍ ԱՂԱՍՈՒ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂՔԻ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՓՈՂՈՑ, 6 ՇԵՆՔԻ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՀՐԱՅՐ ՍԻՐԱԶՆԻԿԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

13) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 10 ՇԵՆՔԻ ԹԻՎ 7/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՄԵԼԻՔ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՉՈՐՍ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

14) ՔԱՂԱՔԱՑԻ ԴԱՎԻԹ ԼՅՈՎԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ <<MERCEDES-BENZ C180>> ՄԱԿՆԻՇԻ 34 RN 030 ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Հայտարարվեց, որ ավագանու օրակարգի նախագիծը հրապարակված է, եթե օրակարգի նախագծի վերաբերյալ կան առաջարկություններ և դիտողություններ խնդրվեց ներկայացնել:

Օրակարգի նախագծի 9-րդ, 10-րդ և 12-րդ հարցերի կապակցությամբ առարկություն ներկայացրեց Անի համայնքի ղեկավար, ավագանու անդամ՝ Արման Սարիբեկյանը:

Առաջարկություն ներկայացվեց օրակարգի 9-րդ, 10-րդ և 12-րդ հարցերը՝

<<9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, ՇԵՆՔ 21, ԹԻՎ 9 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՍՈՒՍԱՆՆԱ ՄԿՐՏԻՉԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, 10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ Հ.ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ, 22 ՇԵՆՔԻ ԹԻՎ 21 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ԹԱՄԱՐԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, 12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂՔԻ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 6 ՇԵՆՔԻ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՀՐԱՅՐ ՍԻՐԱԶՆԻԿԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>, հարցերը հանել օրակարգից, քանի որ հարցերը անհրաժեշտ է լրացուցիչ ուսումնասիրել:

Առաջարկությամբ հանդես եկավավ <<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության ավագանու անդամ Էդիկ ՈՒռուտյանը:

Առաջակություն ներկայացվեց, որպես հրատապ խնդիրներ, օրակարգում ընդգրկել հետևյալ հարցերը՝

1) ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՐԹՈՒՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ԿԵՍԻՑ ԱՎԵԼԻԻՆ ԱՆՀԱՐԳԵԼԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԲԱՑԱԿԱՅԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 91-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ
3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Զեկուցողը նշեց, որ 1-ին հարցի կարևորությունը կայանում է նրանում, որ Իսահակյան-Գյումրի երթուղով գործող տրանսպորտային միջոցը Իսահակյան գյուղից առավոտյան դուրս է գալիս 09:00, որի պատճառով գյուղի ուսանողները ուշանում են դասերից, ուստի անհրաժեշտություն է առաջացել կազմակերպել Անի համայնքի Իսահակյան, Լուսաղբյուր, Շիրակավան, Գուսանագյուղ բնակավայրերից քաղաք Գյումրի ժամը 8:00-ին ուսանողների ուղևորափոխադրումը և հարցի վերաբերյալ Իսահակյան բնակավայրի վարչական ղեկավարը 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 11 գրության համաձայն ներկայացրել է դիմում:

Զեկուցողը նշեց, որ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ավագանու անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, եթե նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի, քվեարկությունների և հանձնաժողովի նիստերի կեսից ավելիին: Նշեց նաև, որ 2025 թվականի սեպտեմբերի 12-ի ավագանու արտահերթ նիստի օրակարգում հարցը ներառված է եղել, սակայն Անի համայնքի ավագանու անդամների ձայների մեծամասնությունը չապահովելու պատճառով անհրաժեշտություն է առաջացել հարցը կրկին ներառել օրակարգում:

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքի Անի համայնքի ավագանու 5 անդամները, <<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցության համայնքի ավագանու մեկ անդամը՝ անհարգելի բացակայել են ավագանու առաջին նստաշրջանի բոլոր 6 նիստերից, քվեարկությունների և հանձնաժողովի նիստերից:

Զեկուցողը նշեց, որ 3-րդ հարցով <<Անի կոմունալ տնտեսություն>> համայնքային բյուջետային հիմնարկի հաստիքացուցակում անհրաժեշտություն է առաջացել ավելացնել նոր՝

Ինժեների հաստիք, որի կարևորությունը պայմանավորված է Անի համայնքում ընթացող մեծ շինարարական աշխատանքներով:

Քվեարկության արդյունքում ներկայացված առաջարկությունն ընդունվեց և կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու հերթական նիստի օրակարգն հաստատվեց:

**<u>Օրակարգ 1</u>**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի, 65-րդ հոդվածի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի երկրորդ նստաշրջանի 2025 թվականի սեպտեմբերի 25-ին ժամը $15^{30}$-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 161-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երտասարդության հարցերի բաժնի պետ Գոհար Ծերունյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի

պարտականությունները կատարող Անժելա Սաղաթելյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ 96,7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ «ԱՐԵԳ ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երտասարդության հարցերի բաժնի պետ Գոհար Ծերունյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 168-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երտասարդության հարցերի բաժնի պետ Գոհար Ծերունյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 98-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լուսինե Գրիգորյան/

8) «ԷՍ ԿԱ ԷՍ ՍԹՈՈՒՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԴԵԶԻՏԱՅԻՆ ՊՈՐՖԻՐԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ 1-ԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ, 17 ՇԵՆՔԻ ԹԻՎ 4 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՊԵՏՐՈՍ ԱՂԱՍՈՒ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 10 ՇԵՆՔԻ ԹԻՎ 7/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՄԵԼԻՔ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՉՈՐՍ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

11) ՔԱՂԱՔԱՑԻ ԴԱՎԻԹ ԼՅՈՎԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ <<MERCEDES-BENZ C180>> ՄԱԿՆԻՇԻ 34 RN 030 ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ԿԵՍԻՑ ԱՎԵԼԻԻՆ ԱՆՀԱՐԳԵԼԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԲԱՑԱԿԱՅԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 91-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

13) ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՐԹՈՒՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հարություն Համբարյան/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Օրակարգ-2</u>

**2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 161-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/**

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագիծը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվում հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2025 թվականից համայնքի քաղաքացիական պաշտպանության և տարահանման պլանները դարձել են գաղտնի, վարժական հավաքների ինտենսիվությամբ պայմանավորված ավելացել են զորահավաքային մարմին ներկայացվող հաշվետվությունների ծավալները, ինչպես նաև այլ աշխատանքային պարտականությունների ավելացումը: Իրականացնում է վարժական հավաքների և զորահավաքների ժամանակ զինվորական կոմիսարիատի կողմից տրված ծանուցումների բաշխումը, օժանդակում է զորահավաքային պլանների կազմման աշխատանքներին:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 161-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի 2025 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 161-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) որոշման հավելվածի <<ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ

ՉՆԵՐԱՌՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ>> բաժնի 51-րդ կետի 2-րդ՝ <<Հաստիքի անվանումը>> սյունակի <<Առաջին կարգի մասնագետ>> բառերը փոխարինել <<Առաջատար մասնագետ>> բառերով, նույն տողի 5-րդ՝ <<Պաշտոնային դրույքաչափը>> սյունակի <<220,0>> թիվը փոխարինել <<250,0>> թվով, իսկ նույն տողի 7-րդ՝ <<Աշխատավարձի չափը>> սյունակի <<220,0>> թիվը փոխարինել <<250,0>> թվով:

բ) Նույն բաժնի վերջին՝ <<Ընդհամենը>> տողի 7-րդ սյունակի <<5336,6>> թիվը փոխարինել <<5366,6>> թվով,

գ) Որոշման հավելվածի վերջին՝ <<Ընդհամենը>> տողի 7-րդ սյունակի <<26606,6>> թիվը փոխարինել <<26636,6>> թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

<u>Օրակարգ-3</u>

**3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երտասարդության հարցերի բաժնի պետ Գոհար Ծերունյան/**

Որոշման նախագիծը ներկայացնելու համար ձայնը տրվեց Գոհար Ծերունյանին

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծով նախատեսվում է <<Անիի համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակում Ֆուտբոլի մարզիչ/Մարալիկ/ հաստիքի քանակը 3 փոխարինել 2 հաստիքի քանակով, Ֆոտբոլի մարզչի օգնական /քաղաք Մարալիկ/ հաստիքի քանակը 1 փոխարինել 2 հաստիքի քանակով :

<<Ջիուզեպպե Պինո Չիաչիոյի անվան մանկապարտեզ>> համայնքային բյուջետային հիմնարկի հաստիքացուցակում մեթոդիստի 0,25 դրույքը փոխարինել 0,75 դրույքով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և

դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 162-Ա որոշման N 7 հավելվածում /<<Անիի համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն/ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման հավելվածի 12-րդ տողի 3-րդ՝ «Հաստիքի քանակը» սյունակի «3» թիվը փոխարինել «2» թվով, նույն տողի 5-րդ՝ «Սահմանված դրույքը» սյունակի «2.5» թիվը փոխարինել «1.5» թվով, նույն տողի 6-րդ՝ «Սահմանված դրույքաչափը» սյունակի

«325 000 » թիվը փոխարինել «195 000» թվով:

2) Որոշման հավելվածի 28-րդ տողի 3-րդ՝ «Հաստիքի քանակը» սյունակի «1» թիվը փոխարինել «2» թվով, նույն տողի 5-րդ՝ «Սահմանված դրույքը» սյունակի «1» թիվը փոխարինել «2» թվով, նույն տողի 6-րդ՝ «Սահմանված դրույքաչափը» սյունակի «104 000 » թիվը փոխարինել «208 000» թվով:

3) վերջին՝ «Ընդամենը» տողի 6-րդ՝ «Սահմանված դրույքաչափը» սյունակի «4329000» թիվը փոխարինել «4303000» թվով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 162-Ա որոշման N 4 հավելվածում

/<<Ջիուզեպպե Պինո Չիաչիոյի անվան մանկապարտեզ>> համայնքային բյուջետային հիմնարկ/ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման հավելվածի 3-րդ տողի 5-րդ՝ «Սահմանված դրույքը» սյունակի «0.25» թիվը փոխարինել «0.75» թվով, նույն տողի 6-րդ՝ «Սահմանված դրույքաչափը» սյունակի «37500» թիվը փոխարինել «112500» թվով:

2) վերջին՝ «Ընդամենը» տողի 5-րդ՝ «Սահմանված դրույքը» սյունակի «12.24» թիվը փոխարինել «12.74» թվով, 6-րդ՝ «Սահմանված դրույքաչափը» սյունակի «1486900» թիվը փոխարինել «1561900» թվով:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային ենթակայությամբ բյուջետային հիմնարկների և համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունների 2025 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 162-Ա որոշման N 9 հավելվածում /<<Անի կոմունալ տնտեսություն>> համայնաքային բյուջետային հիմնարկ/ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) որոշման հավելվածի <<ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍ>> բաժնի 12-րդ կետից հետո ավելացնել նոր՝ 13-րդ կետ, հետևյալ խմբագրությամբ՝

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ | Սահմանված դրույքը | Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 13 | Ինժեներ | 1 | 220 000 | 1 | 220 000 |

2) Նույն բաժնի «Ընդամենը» տողի 6-րդ սյունակում նշված «2 555 000» թիվը փոխարինել «2 775 000» թվով:

3) Որոշման հավելվածի վերջին <<ԸՆԴԱՄԵՆԸ>> տողի 6-րդ սյունակում նշված «18 140 000» թիվը փոխարինել «18 360 000» թվով:

4) Որոշման հավելվածի վերջին տողի հաստիքի քանակը սյունակի <<119>> թիվը փոխարինել <<120>> թվով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

<u>Օրակարգ-4</u>

## 4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի պարտականությունները կատարող Անժելա Սաղաթելյան/

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 181-Ն որոշման մեջ նախատեսված փոփոխությունները և պատասխանեց ավագանու անդամների հարցերին:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 181-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից

<u>Օրակարգ-5</u>

**5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ 96,7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՑ, ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ «ԱՐԵԳ ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երտասարդության հարցերի բաժնի պետ Գոհար Ծերունյան/**

Որոշման նախագիծը ներկայացնելու համար ձայնը տրվեց Գոհար Ծերունյանին:

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքապետարան դիմում է ներկայացրել Անհատ ձեռնարկատեր «ԱՐԵԳ ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԸ», խնդրելով տարածք տրամադրել Անի համալիր մարզադպրցի տարածքում, իր ֆիտնես մարզասարքերը տեղադրելու նպատակով, դիմումում նշելով նաև, որ Անի համալիր մարզադպրոցի սաները հնաարավորություն կունենան անվճար մարզվել մարզասարքերով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդուվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ 96,7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՑ, ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ «ԱՐԵԳ ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Անհատ ձեռնարկատեր «Արեգ Ավետիսյանի» 2025 թվականի սեպտեմբերի 17-ի դիմումը՝ Անի համալիր մարզադպրոցում տարածք տրամադրելու վերաբերյալ.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**

**որոշում է՝**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող մարզ

Շիրակ, Անի համայնք, քաղաք մարալիկ, Հաղթանակի փողոցի վրա գտնվող <<Անի համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզադպրոցի շենքի առաջին հարկի 96,7 քառակուսի մետր մակերեսով տարածքը անհատույց, երկու տարի ժամկետով օգտագործման տրամադրել «Արեգ Ավետիսյան Ալեքսանի» Անհատ ձեռնարկատիրոջը /Պետական հաշվառման համար՝ 48.1176952, տրված՝ 2021-05-07, ՀՎՀՀ՝ 57409624, անձնագիր՝ AU0680777, տրված՝ 2022-04-12-ին 022-ի կողմից/ <<Անի համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաների համար Ֆիտնես մարզասրահ բացելու և ֆիզիկական պատրաստության անվճար մարզումներ անցկացնելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով «Արեգ Ավետիսյան Ալեքսանի» Անհատ ձեռնարկատիրոջ հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված տարածքի օգտագործման պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

**<u>Օրակարգ-6</u>**

**6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 168-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երտասարդության հարցերի բաժնի պետ Գոհար Ծերունյան/

Որոշման նախագիծը ներկայացնելու համար ձայնը տրվեց Գոհար Ծերունյանին:

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային ենթակայության <<Անի համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության և <<Մարալիկի երաժշտական դպրոց>> բյուջետային հիմնարկի առանձին մարզիչների և մանկավարժների համար նպաստ սահմանելու մասին N 168-Ա որոշման հավելվածով ներկայացված մարզիչների անվանացանկում եղել են որոշակի փոփոխություններ, որոշ մարզիչներ նոր են ընդունվել աշխատանքի, որոշներ ազատվել են աշխատանքից, ուստի նախատեսվում է կատարել որոշակի փոփոխություններ:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 168-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով.

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին***

**որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային ենթակայության <<Անի համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության և <<Մարալիկի երաժշտական դպրոց>> բյուջետային հիմնարկի առանձին մարզիչների և մանկավարժների համար նպաստ սահմանելու մասին>> N 168-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման հավելվածով սահմանված նպաստը հատկացնել Անի համայնքի բյուջեի վարչական մասի գործառական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 (Սոցիալական հատուկ արտոնություններ) այլ դասերին չպատկանող)) 4727 (Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից) հոդվածից, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 566400 /հինգ հարյուր վաթսունվեց հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ

3. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Հավելված<br>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի<br>Անի համայնքի ավագանու 2025 թվականի<br>սեպտեմբերի 25-ի N 116-Ա որոշման

<<Հավելված<br>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի<br>Անի համայնքի ավագանու 2024 թվականի<br>դեկտեմբերի 17-ի N 168-Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ <<ՄԱՐԱԼԻԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՐԶԻՉՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՍՏԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

***<<Անի համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզիչ-մանկավարժներ***

| N | Մարզիչ-մանկավարժի ազգանունը, անունը, հայրանունը | Երթուղի | Ամսական աշխատանքային օրերի քանակը | Գումարը ամսական կտրվածքով /ՀՀ դրամ/ | Գումար եռամսյակային կտրվածքով /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Գյուլյան Նաիրա Հրանտի | Գյումրի- Աղին, Աղին-Շիրակավան-Լուսաղբյուր, Իսահակյան-Գուսանագյուղ-Մարալիկ | 20 | 25000 | 75000 |
| 2. | Մելքոնյան Տիգրան Արտաշեսի | Գյումրի-Մարալիկ | 20 | 25000 | 75000 |
| 3 | Ստեփանյան Մարիամ Արթուրի | Գյումրի-Մարալիկ | 16 | 11200 | 33600 |
| 4 | Մինասյան Ժիրայր Արմենակի | Մարալիկ-Սարակապ-Ջրափի | 16 | 16000 | 48000 |
| 5 | Օլթեցյան Ռազմիկ Աշոտի | Գյումրի –Մարալիկ | 20 | 25000 | 75000 |
| 6. | Մկրտչյան Հակոբ Արայի | Գյումրի –Մարալիկ | 20 | 25000 | 75000 |
| **Ընդամենը** | | | | **122 200** | **381 600** |

**<<Մարալիկի երաժշտական դպրոց>> համայնքային բյուջետային հիմնարկի մանկավարժներ**

| N | Մանկավարժի ազգանունը, անունը, հայրանունը | Երթուղի | Ամսական աշխատանքային օրերի քանակը | Գումարը ամսական կտրվածքով /ՀՀ դրամ/ | Գումար եռամսյակային կտրվածքով /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հարությունյան Մկրտիչ Մարտինի | Գյումրի –Մարալիկ | 12 | 8400 | 25200 |
| 2. | Մկրտչյան Միսակ Գուրգենի | Գյումրի –Մարալիկ | 12 | 8400 | 25200 |
| 3. | Գասպարյան Աշոտ Գասպարի | Գյումրի –Մարալիկ | 12 | 8400 | 25200 |
| 4. | Ճավռշյան Անահիտ Սերյոժայի | Գյումրի –Մարալիկ | 12 | 8400 | 25200 |
| 5. | Եղոյան Լուսինե Գրիգորի | Գյումրի –Մարալիկ | 16 | 11200 | 33600 |
| 6. | Ալավերդյան Սերգեյ Հովհաննեսի | Գյումրի –Մարալիկ | 12 | 8400 | 25200 |
| 7. | Ուռուտյան Վահան | Գյումրի –Մարալիկ | 12 | 8400 | 25200 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գտրգի | | | | |
| **Ընդամենը** | | | **61 400** | **184 800** |

>>

<u>Օրակարգ-7</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 98-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լուսինե Գրիգորյան/**

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց որոշման նախագիծը և պատասխանեց համայնքի ավագանու անդամների հարցերին:

Պարզաբանումներ ներկայացվեց չափորոշիչներով սահմանված Անի համայնքում սոցիալական աջակցության ոլորտում համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակների, սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին սոցիալական ծառայություններ մատուցելու կարգավորումների, աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու համար համայնքի ղեկավարի կողմից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմանների և գործունեության ընթացակարգի, ծառայություն ստանալու համար դիմած անձի (անձանց) կարիքների գնահատման չափորոշիչների, դրանց համապատասխան գնահատման միավորների և ընտանիքի գնահատման թերթիկի ձևի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացվեց դրամական հատկացում կատարելու նվազագույն և առավելագույն չափերը:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդուվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 98-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ, 11-րդ մասերի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի, 20-րդ հոդվածի 1-ին մասի /բացառությամբ 8-րդ կետի/ դրույթներով,

<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**

**որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում

դրամական հատուցման ծառայությունների տրամադրման չափորոշիչները հաստատելու մասին>> N 98-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**<u>Օրակարգ-8</u>**

**8) «ԷՍ ԿԱ ԷՍ ՍԹՈՈՒՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԴԵԶԻՏԱՅԻՆ ՊՈՐՖԻՐԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ 1-ԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

***/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/***

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագիծը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված <<Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները կարգի>> 28-րդ կետի դրույթներով, նշեց նաև որ առկա է «Էս Կա Էս Սթոուն» սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից Անի համայնքի Գուսանագյուղ բնակավայրի վարչական տարածքում գտնվող անդեզիտային պորֆիրիտների հանքավայրերի տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով կատարվելիք աշխատանքների վերաբերյալ հանրային 1-ին քննարկման 2025 թվականի սեպտեմբերի 16-ի արձանագրությունը:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**«ԷՍ ԿԱ ԷՍ ՍԹՈՈՒՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԴԵԶԻՏԱՅԻՆ**

**ՊՈՐՖԻՐԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ 1-ԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված <<Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները կարգի>> 28-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «Էս Կա Էս Սթոուն» սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից Անի համայնքի Գուսանագյուղ բնակավայրի վարչական տարածքում գտնվող անդեզիտային պորֆիրիտների հանքավայրերի տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով կատարվելիք աշխատանքների վերաբերյալ հանրային 1-ին քննարկման 2025 թվականի սեպտեմբերի 16-ի արձանագրությունը.

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Տալ նախնական համաձայնություն՝ «Էս Կա Էս Սթոուն» սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից Անի համայնքի Գուսանագյուղ բնակավայրի վարչական տարածքում գտնվող անդեզիտային պորֆիրիտների հանքավայր տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով նախատեսվող գործունեության վերաբերյալ:

**2.** Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանը նշեց, որ օրակարգի 9-րդ և 10-րդ հարցերը նմանատիպ հարցեր են և զեկուցման համար ձայնը տվեց Զորիկ Խաչատրյանին:

***<u>Օրակարգ-9</u>***

**9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ, 17 ՇԵՆՔԻ ԹԻՎ 4 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՊԵՏՐՈՍ ԱՂԱՍՈՒ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծում հիմք ենք ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի մարտի 27-ի N 55-Ա որոշումը, համաձայն որի՝ Մարալիկ քաղաքի Հ. Շիրազի փողոցի 17-րդ շենքի թիվ 4 բնակարանը վիճակահանությամբ հատկացվել է Պետրոս Աղասու Պետրոսյանի 2 անձից բաղկացած ընտանիքին, հաշվի առնելով քաղաքացի Պետրոս Աղասու Պետրոսյանի 2025 թվականի ապրիլի 2-ի դիմումը:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ, 17 ՇԵՆՔԻ ԹԻՎ 4 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՊԵՏՐՈՍ ԱՂԱՍՈՒ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1260-Ա որոշման դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի մարտի 27-ի N 55-Ա որոշումը, համաձայն որի՝ Մարալիկ քաղաքի Հ. Շիրազի փողոցի 17-րդ շենքի թիվ 4 բնակարանը վիճակահանությամբ հատկացվել է Պետրոս Աղասու Պետրոսյանի 2 անձից բաղկացած ընտանիքին, հաշվի առնելով քաղաքացի Պետրոս Աղասու Պետրոսյանի 2025 թվականի ապրիլի 2-ի դիմումը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**

**որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի Հ. Շիրազի փողոցի 17-րդ շենքի թիվ 4 բնակարանը 81.28 քմ մակերեսով /կադաստրային ծածկագիր՝ 08-003-0020-0134-001-004, Վկայական՝ N 18062025-08-0046/ նվիրել տվյալ բնակարանում հաշվառված և փաստացի բնակվող քաղաքացի Պետրոս Աղասու Պետրոսյանի /Անձնագիր՝ AX 0259822, տրված՝ 15.05.2024թ, 022-ի կողմից, հետագայում՝ Նվիրառու/ երկու անձից բաղկացած ընղանիքին :

2. Սույն որոշման 1-ին կետով նվիրվող բնակարանի նկատմամբ համասեփականատեր ճանաչել՝ Պետրոս Աղասու Պետրոսյանին, կնոջը՝ Գայանե Սողոմոնի Արսենյանին /Անձնագիր՝ AX0337122, տրված՝ 01.07.2024թ, 028-ի կողմից/:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Նվիրառույի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր.

2) Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Նվիրառուների միջոցներով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

<u>Օրակարգ-10</u>

**10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 10 ՇԵՆՔԻ ԹԻՎ 7/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՄԵԼԻՔ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՉՈՐՍ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/**

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի Արկադի Տեր-Թադևոսյան փողոցի 10-րդ շենքի թիվ 7/1 բնակարանը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում տվյալ բնակարանի բնակիչների կողմից չի սեփականաշնորհվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ հաստատված N 7 հավելվածով Մարալիկ քաղաքի պետական բնակելի ֆոնդը և պետական ոչ բնակելի տարածքները սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքին, հիմք ընդունելով <<Հայաստանի ազգային արխիվ>> պետական ոչ առևտրային կազմակերպության Մարալիկի տարածքային ներկայացուցչության 02.06.2023 թ. N Մր-180 արխիվային տեղեկանքը, համաձայն որի Անիի շրջխորհրդի գործկոմի 1980 թվականի փետրվարի 14-ի թիվ 3 արձանագրության որոշմամբ Մարալիկ ավանի թիվ 10 շենքի 1-ին մուտքի 4-րդ հարկի 3 սենյականոց թիվ 7 բնակարանը /ներկայումս գործող հասցեն՝ մարզ Շիրակ Անի համայնք, քաղաք Մարալիկ Արկադի Տեր-Թադևոսյան փողոցի 10-րդ շենք 7/1 բնակարան/ հատկացվել է Պատվական Եղիազարի Ալեքսանյանի /մահացած՝ 05.04.2018թ./ 4 անձից բաղկացած ընտանիքին, հաշվի առնելով քաղաքացի Մելիք Պատվականի Ալեքսանյանի 2023 թվականի դեկտեմբերի 19-ի դիմումը և Մելիք Պատվականի Ալեքսանյանի ընտանիքը նշված հասցեում փաստացի բնակվելու վերաբերյալ Անիի համայնքապետարանի

աշխատանքային խմբի կողմից կազմված 2025 թվականի սեպտեմբերի 9-ի արձանագրությունը, անհրաժեշտ է կատարել բնակարանի նվիրատվություն:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ, 17 ՇԵՆՔԻ ԹԻՎ 4 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՊԵՏՐՈՍ ԱՂԱՍՈՒ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1260-Ա որոշման դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի մարտի 27-ի N 55-Ա որոշումը, համաձայն որի՝ Մարալիկ քաղաքի Հ. Շիրազի փողոցի 17-րդ շենքի թիվ 4 բնակարանը վիճակահանությամբ հատկացվել է Պետրոս Աղասու Պետրոսյանի 2 անձից բաղկացած ընտանիքին, հաշվի առնելով քաղաքացի Պետրոս Աղասու Պետրոսյանի 2025 թվականի ապրիլի 2-ի դիմումը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**

**որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի Հ. Շիրազի փողոցի 17-րդ շենքի թիվ 4 բնակարանը 81.28 քմ մակերեսով /կադաստրային ծածկագիր՝ 08-003-0020-0134-001-004, Վկայական՝ N 18062025-08-0046/ նվիրել տվյալ բնակարանում հաշվառված և փաստացի բնակվող քաղաքացի Պետրոս Աղասու Պետրոսյանի /Անձնագիր՝ AX 0259822, տրված՝ 15.05.2024թ, 022-ի կողմից, հետագայում՝ Նվիրառու/ երկու անձից բաղկացած ընղանիքին :

2. Սույն որոշման 1-ին կետով նվիրվող բնակարանի նկատմամբ համասեփականատեր ճանաչել՝ Պետրոս Աղասու Պետրոսյանին, կնոջը՝ Գայանե Սողոմոնի Արսենյանին /Անձնագիր՝ AX0337122, տրված՝ 01.07.2024թ, 028-ի կողմից/:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Նվիրառույի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր.

2) Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Նվիրառուների միջոցներով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

<u>Օրակարգ-11</u>

**11) ՔԱՂԱՔԱՑԻ ԴԱՎԻԹ ԼՅՈՎԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ <<MERCEDES-BENZ C180>> ՄԱԿՆԻՇԻ 34 RN 030 ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/***

Զեկուցողը նշեց, որ Հարություն Լյովայի Հակոբյանի 2025 թվականի սեպտեմբերի 9-ին դիմում է ներկայացրել Անի համայնքապետարան, որ իրեն պատկանող <<MERCEDES-BENZ C180>> մակնիշի 34 RN 030 պետական համարանիշի տրանսպորտային փոխադրամիջոցը մնացել է գյուղ Մատաղիսում (Թալիշում)՝ հակառակորդի վերահսկողության տակ 27.09.2020 թվականին Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից սանձազերծված պատերազմի ընթացքում, նշեց նաև որ առկա են Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակի 33651 զորամասի շտաբի պետ-հրամանատարի տեղակալի 2021 թվականի հունիսի 14-ի տեղեկանքը, համաձայն որի 27.09.2020 թվականին Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից սանձազերծված պատերազմի ընթացքում՝ 02.10.2020 թվականի դրությամբ Դավիթ Լյովայի Հակոբյանի սեփականության իրավունքով պատկանող <<MERCEDES-BENZ C180>> մակնիշի 34 RN 030 պետական համարանիշի տրանսպորտային փոխադրամիջոցը մնացել է գյուղ Մատաղիսում (Թալիշում)՝ հակառակորդի վերահսկողության տակ, նշեց որ առկա է նաև Լեռնային Ղարաբաղի Մատաղիս համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 16-ի տեղեկանքը նույն մասին, ուստի նախագծով նախատեսվում է սահմանել արտոնություն տվյալ փոխադրամիջոցի նկատմամբ :

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՆՈՐ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Անիի համայնքապետարանի կողմից սեփականության իրավունքով ձեռք բերված նոր գույքի մասով համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի կողմից սեփականության իրավունքով ձեռք բերված նոր գույքի մասով համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

<u>Օրակարգ-12</u>

**12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ԿԵՍԻՑ ԱՎԵԼԻՆ ԱՆՀԱՐԳԵԼԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԲԱՑԱԿԱՅԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ**

**ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 91-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/**

Զեկուցողը նշեց, որ հարցը քննարկվեց օրակարգում ներառելու ժամանակ:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ԿԵՍԻՑ ԱՎԵԼԻՆ ԱՆՀԱՐԳԵԼԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԲԱՑԱԿԱՅԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 91-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 70-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հաշվի առնելով, որ <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքի Անի համայնքի ավագանու թվով 5 /հինգ/ <<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցության Անի համայնքի ավագանու 1 /մեկ/ անդամները ավագանու առաջին նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել են ավագանու բոլոր 6 նիստերից, քվեարկությունների և հանձնաժողովի նիստերից.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Վաղաժամկետ դադարեցնել <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքի և <<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցության Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու հետևյալ անդամների լիազորությունները՝

**1) <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքի ավագանու անդամներ՝**

ՎԵՐԳԻՆԵ ՍՈՒՐԻԿԻ ԿՆՅԱԶՅԱՆԻ,

ԱՎԵՏԻՔ ՎԱԶԵՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ,

ՍԱՄՎԵԼ ՎԱՀԱԳԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ,

ԼՈՒՍԻՆԵ ԱՇՈՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ,

ՄԵԼՍ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ:

**<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցության համայնքի ավագանու անդամ՝**

ԱՐՄԵՆ ԱԼԲԵՐՏԻ ԲՈԶԻԿՅԱՆԻ:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին.

Սույն որոշումը յոթ աշխատանքային օրվա ժամկետում ուղարկել թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի ընթացքում ավագանու նիստերի, քվեարկությունների և հանձնաժողովի նիստերի կեսից ավելիին անհարգելի պատճառով բացակայած ավագանու անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին>> N 91-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>**Օրակարգ-13**</u>

**13) ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՐԹՈՒՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հարություն Համբարյան/**

Զեկուցողը նշեց, որ  հարցը քննարկվեց օրակարգում ներառելու ժամանակ:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՐԹՈՒՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերի  դրույթներով, հաշվի առնելով Անի համայնքի Իսահակյան, Լուսաղբյուր, Շիրակավան, Գուսանագյուղ բնակավայրերից քաղաք Գյումրի ժամը 8:00-ին ուսանողների ուղևորափոխադրումը կազմակերպելու հրատապ անհրաժեշտությունը և հարցի վերաբերյալ Իսահակյան բնակավայրի վարչական ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի  N 11 գրությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Անի համայնքի Իսահակյան բնակավայրից քաղաք Գյումրի ժամը 8:00-ին ուսանողների ուղևորափոխադրումը կազմակերպելու նպատակով համայնքի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 06, դաս 01 /Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ/ և տնտեսագիտական դասակարգման 4239 /Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածից ամսեկան հատկացնել 50000 /հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ դրամական աջակցություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Նիստը վարող համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանը հայտարարեց, որ Անի համայնքի ավագանու նիստի օրակարգի հարցերը սպառված են, նիստը հայտարարվեց փակված:

Շնորհակալություն հայտնվեց նիստի մասնակցության համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

**ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝**
**ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ**
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ** **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԲԱՐՅԱՆ**

<<25>> ապրիլի 2025 թ.
քաղաք Մարալիկ